թեան դերագոյն առարկան: Իսկ ո՞րն է նրա ենթական, որո՞նք են նաեւ այն կողմնակի ազդակները, որոնք նպաստել կարող են այդ քաղաքականութեան յաջողութեան:

Անհրաժեշտ չէ, հարկաւ, որ ներկայ պայմաններում գոյութիւն ունենան բոլոր այն նախադրեալները, որ պէտք են առաջադրուած քաղաքական նպատակը իրագործելու համար: Բայց նրանք պիտի լինին առհասարակ հնարաւոր՝ դէթ քաղաքական նպաստաւոր պայմաններում, պիտի բխին իրական կեանքից:

Ամէն մի ժողովուրդի քաղաքական ճակատագիրը դարբնողը նախ եւ առաջ այդ ժողովուրդը ինքն է: Կողմնակի ազդակները կարող են նպաստել կամ վնասել նրան, եւ սակայն տուեալ ժողովուրդը ինքն է, որ իրականացնել կարող է — եւ կամ անկարող է — իր քաղաքական խոչալը:

Այսպէս նաեւ, հայ ժողովրդի վրայ է ընկնում ողջ ծանրութիւնը սեփական դատի: Նա իր ջանքերով ստեղծեց մի հայրենիք, ձեռք բերաւ նրա համար ազատութիւն եւ անկախութիւն, հայութիւնը առնում էր նաեւ առաջին քայլերը հայրենի հողերի միացման, երբ կէս ճամբուն մնաց եւ վրայ տուաւ իր քաղաքական նուաճումների մի խոշոր մասը:

Շատ է խօսուել պատճառների մասին, շատ ենք ծանրացել մանաւանդ արտաքին պարագաների վրայ, որոնք յիրաւի վճռական դեր են խաղացել: Եւ սակայն դա չէ նշանակում, թէ ներքին պատճառները նուազ ճակատագրական են եղել: Եւ դրանց թւում հիմնականն այն է, մեր կարծիքով, որ հայ ժողովուրդը առաջադրեց իրեն մի քաղաքական ծրագիր, որի ծանրութեան տակ պարզապէս կքեց ինքը:

Յիշեցէք, թէ 1918–1920 թուականների կարճ միջոցին ո՛րչափ ձեւափոխութիւններ կրեցին հայկական հողային պահանջները,— ծովից ծով ծրագրից մինչեւ Վիլսընեան եւ աւելի անձուկ սահմանները:

Հայ ժողովուրդը ի վիճակի՞ էր իր սեփական ոյժերով իրագործելու այդ ծրագիրները: Հարկաւ ոչ: Եւ մենք մեր աչքերը յառել էինք դէպի դուրս, մեր յոյսերը կապել օտար ազդակների հետ, որոնք նպաստաւոր պայմաններում միայն օժանդակել կարող էին եւ ոչ հանդիսանալ վարիչ ազդակ՝ իրենց համար յամենայն դէպս մի օտար դատի:

Անցել են տարիներ, եւ մենք պարտաւոր ենք վերադնահատութեան ենթարկել մեր անցեալը, ապագային խուսափելու համար նման սխալներից:

Արդեո՞ք մեր հողային առաւելագոյն պահանջները բխում էին Հայաստանի եւ հայ ժողովուրդի կենսական շահերից, չասելու համար արդեո՞ք հասանելի էին նրա քաղաքական տարողութեան: Հարկաւ ոչ: Եւ այդ առաւելագոյն պահանջները մեզ թելադրեցին — զանազան եսական նկատումներով — մի կողմից օտար դիւանագէտները, իսկ միւս կողմից՝ գաղութահայ բուրժուազիան, որի համար անընդունելի էր «Այրարատեան Հայաստանը», եթէ նրա մէջ չմտնէր Կիլիկիան: Եւ որովհետեւ նրա, որպէս անհող եւ հայրենախոյս մի տարրի, ազգային ամբողջ քաղաքականութիւնը արմատներ չունէր եւ չունի բուն իսկ երկրի եւ ժողովրդի մէջ, դրա համար էլ նա ընդունակ է մի ծայրայեղութիւնից միւս ծայրայեղութիւնն ընկել: Երկէ ծովէ ծով Հայաստան պահանջող մարդիկ այսօր պատրաստ են հաշտուել մինչեւ իսկ փոքրացած եւ մասնատուած հայրենիքի ստրկացման փաստի հետ:

Թողնենք սակայն անցեալը, որ քաղաքական սրբադրողի դեր ունի ներկայի եւ ապագայի համար:

Պատմական բերումներով ներկայիս Հայաստանի սահմանների մէջ է ապրում մեր ժողովուրդի մի փոքր մասը միայն, հազիւ ¼-ը: Մնացածը կամ անդրկովկասեան սահմանամերձ երկրամասերում է ապրում, եւ կամ ցրուած՝ Կովկասի, Խորհ. Միութեան եւ արտասահմանի զանազան վայրերում:

Հայաստանի հայութիւնն է որ կրողը պիտի հանդիսանայ մեր ազգային բաղաքականութեան, նրա առաջ մղիչ ոյժը: Քանի որ, եթէ ճիշդ ձեւակերպեցինք, բացառապէս Հայաստանն է նոյն այդ քաղաքականութեան առարկան, ապա ուրեմն հասկանալի է եւ միակ ընդունելի այն ճշմարտութիւնը թէ՝ նրա վրայ նստած ժողովուրդն էլ կրողը պիտի լինի այդ քաղաքականութեան:

Ուրիշ խօսքով՝ քանի որ հայկական խընդ-